«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2015 թվականի

«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը Գյումրու մասնաճյուղում» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը Գյումրու մասնաճյուղում»** հարցը (զեկուցող՝ Գյումրու մասնաճյուղի տնօրեն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա.Դավոյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. հաշվետու ժամանակաշրջանում զգալի կազմակերպական աշխատանքներ են կատարվել ուսումնական գործընթացի կատարելագործման, կրեդիտային համակարգի արմատավորման և զարգացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղի գիտական խորհրդի նիստերում լսվել և քննարկվել են ուսումնական, գիտական, դաստիարակչական, կարգապահական ու կազմակերպական բազմաբնույթ հարցեր: Առաջ են քաշվել կրեդիտային համակարգի կիրառման գործնական արդյունավետության բարձրացման հիմնահարցեր:

Տնօրինությունը, ամբիոնները և կառուցվածքային ստորաբաժանումները մշտապես հսկողություն են սահմանել ուսումնագիտական գործընթացի նկատմամբ:

Դրական տեղաշարժեր են կատարվել ուսումնական գործընթացի կազմակերպման ասպարեզում: Ամբիոններում հաճախակի կատարվել են քննարկումներ ուսման որակի բարձրացման և ուսանողների հետ կատարվող ուսումնադաստիարակչական աշխատանքների ուղղությամբ:

Պրոֆեսորադասախոսական կազմի թիվը 47 է, որից՝ 5 գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 12 գիտությունների թեկնածու, դոցենտ, 11 գիտությունների թեկնածու:

Հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղի դասախոսները հրատարակել են 59 գիտական հոդված:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Մասնաճյուղի 2014-2015 ուսումնական տարվա ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարած աշխատանքը գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել ամբիոններին՝**
   1) դասախոսությունները, սեմինար և գործնական պարապմունքները անցկացնել ժամանակակից տեխնիկական միջոցներով և արդյունավետ մեթոդներով.
   2) բողոքարկման գործընթացը կազմակերպել միայն հանձնաժողովներով: Գնահատականի յուրաքանչյուր փոփոխություն քննարկել ամբիոնի և գիտական խորհրդի նիստերում.
   3) հատուկ ուշադրություն դարձնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմատիկայի նորացմանը, իսկ դրանց պաշտպանությունները կազմակերպել միայն էկեկտրոնային հավելվածների ներկայացմամբ.
   4) փորձառության վայրերը հնարավորության սահմաններում համապատասխանեցնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմատիկային.

5) ամբիոնները համալրել բարձր որակավորում ունեցող համապատասխան մասնագետներով.
6) խիստ պատասխանատվությամբ առաջնորդվել ինչպես դասաբաշխումներ իրականացնելիս, այնպես էլ դասախոսական կադրեր ընտրելիս.
7) բացառել հաճախակի դասաձախողումներ թույլ տված դասախոսների ներգրավումը դասավանդման գործընթացում.
8) ակտիվություն ցուցաբերել կրթական որակի բարեփոխման գործընթացում և համապատասխան առաջարկություններ ներկայացնել մայր բուհ.

3. Հանձնարարել մասնաճյուղի տնօրենին՝

1) մասնաճյուղի գիտական խորհրդի նիստերում քննարկել մայր բուհի գիտական խորհրդի նիստերի որոշումները,
2) մասնաճյուղի գիտական խորհրդի նիստերում պարբերաբար քննարկել կրեդիտային համակարգի կիրառման և կատարելագործման հետ կապված հիմնահարցերը և առաջարկությունները ներկայացնել մայր բուհ.
3) ակտիվացնել և ավելի նպատակային դարձնել գիտահետազոտական աշխատանքների ոլորտը և պարբերաբար հաշվետվություններ ներկայացնել ՀՊՏՀ.
4) ակտիվացնել համագործակցությունը մայր բուհի համապատասխան մասնագիտական ամբիոնների հետ.
5) հնարավորինս նվազագույնի հասցնել ուսման վարձի գծով պարտավորությունները:

4. ՀՊՏՀ ռեկտորատին՝

1) ՀՊՏՀ-ում լույս տեսնող դասագրքերից և ուսումնական ձեռնարկներից 5-ական օրինակ տրամադրել մասնաճյուղին, ինչպես նաև կազմակերպել խորհրդատվություններ մասնաճյուղի դասախոսների համար.
2) հրատարակչական պլաններում նախատեսել ուսումնագիտական հրապարակումներ մասնաճյուղի դասախոսների համար.
3) աջակցել մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի սերնդափոխության գործընթացին՝ ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի միջոցով պատրաստելով համապատասխան կադրեր.
4) ուսումնաարտադրական և գիտահետազոտական փորձառություններն անցկացնելու նպատակով տարբեր կազմակերպությունների հետ պայմանագրեր կնքելիս ներառել նաև մասնաճյուղի ուսանողներին:
5) ՀՊՏՀ ուսումնամեթոդական խորհրդի կազմում ներգրավել մասնաճյուղի ներկայացուցիչ:

5. Սույն որոշումը քննարկել մասնաճյուղի գիտական խորհրդի և ամբիոնների նիստերում ու ձեռնարկել գործուն միջոցառումներ՝ նշված հանձնարարականները կենսագործելու համար:

6. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել պրոռեկտորներ Պ.Ա.Քալանթարյանին, Մ.Ն.Հարությունյանին և Գ.Ի.Վարդանյանին:

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**
12.06.2015 թ.